

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՄԱՆԵԼԻ ԿԱՄՕՐԷՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Գերապատիւ Տ. Մեսրոպ եպիսկոպոսի, բարձրապատիւ Տ. Բագրատ, Տ. Մատթէոս, Տ. Գարեգին, Տ. Բարգէն և Տ. Ներսէս վարդապետաց, շնորհուն դպիր Գալուստ Տէր Մկրտչեանի և մեծարգոյ ուսուցչաց Հայկազ ճեմարանի Մանուկ Աբեղեանի, Ստեփաննոս Կանայեանի, Գէորգ Ալթունեանի, Ռուբէն Աբրահամեանի և Գուրգէն Էդիլեանի, հարազատից Մայր Աթոռոյս նուիրեմք ողջոյն և օրհնութիւն։

Ներկրութեամբ սրտի տեսանելեմք, զի յամենայն կողմանց մատուրականք մեր և մամուլն փափագին ոճնել զ400-ամեակն Հայ տպագրութեան, որ լրանայ յայսմ ամի։ Յընթացս չորից դարուց, արդարև, ի շնորհս տպագրութեան և տպարանաց մերոց ծաղկեցաւ և ճոխացաւ մայրենի գրականութիւնն և յառաջադիմեցաւ համայն սիրելի ազգն

մեր ըստ մտաւորականի և ըստ բարոյականի։ 400–ամեայ յոբելեան Հայ տպագրութեան է ոչ համազգային, ուստի ամենեքեան պարտին մասնակից լինել յոբելեանի և խորհել վասն յաւերժացուցանելոյ զայս ոչ քաղաքակրթութեան մերոյ՝ ազգօգուտ գործովք և ձեռնարկութեամբք։

Արդ՝ այսու Հայրապետական կոնդակաւ Մերով կարգեմք զՁեզ անդամս Յոբելենական Ցանձնաժողովոյ և յանձն առնեմք Ձեզ փութով գումարել ժողովս վասն կազմակերպելոյ զգործ յոբելենի մշակելոյ զմանրամասն ծրագիր մասնակցութեան Ս. Էջմիածնի 400-ամեայ յոբելենի Հայ տպագրութեան և ներկայացուցանել ի վախճանական անօրէնութիւն Մեր։

Ողջ լերուք, զօրացեալ ի Տէր և օրհնեալ ի Մէնջ։ Ամէն։

ԳԷՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

25 Ապրիլի 1912 ամի
Ըստ տոմարի ՌՃԿԱ
ի Հայրապետութեան Մերում Ա. ամի
յԱրարատեան Մայր Աթոռ ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ. թ. 302.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ ԱԶԳԻՍ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Կոնդակ ս. Էջմիածնի ս. Սինոդի անունով, որով հաստատուեց և վերադարձուեց ի ճիշտ գործադրութիւն՝ Սինոդի ներկայացրած Մայր Աթոռի Գէորգեան Հոգևոր ճեմարանի, Վեհարանի, Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի, Գանձակի, Ախալցխայի, Գօրու Հոգևոր կառավարութիւնների, Ծաղկէվանք, Ծիրանաւոր և Թէլէթ ուխտատեղիների 1912 թ. նախահաշիւները։ 13 ապրիլի. թ. 2.

Կոնդակ Մայր Աթոռի միաբան Տ. Բագրատ վարդապետ Վարդապարեանի անունով, որով կարգուեց դիւանապետ Վեհափառ Հայրապետի դիւանի։ 13 ապրիլի. թ. 3.

Նորին Սրբութեան մակագրութիւն ս. Էջմիածնի Սինոդի 16 ապրիլի թ. 749 յայտարարութեան վրայ, որով